



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

ՈՐՈՇՈՒՄ

**2022թ. ԱՇՆԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՐԳԵԼԻ ՊԱՏՃԱՌՈՎ
ՉՄԱՍՆԱԿՑԱԾ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳՐՈՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՆՑԱԾ
ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 15.03.2019թ. թիվ 5/13-Լ որոշմամբ հաստատված «Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգ»-ի 5-րդ կետի պահանջով,

ՈՐՈՇԵՑԻ՝

- 1. Սահմանել 2022թ. աշնան որակավորման քննությանը հարգելի պարճառով չմասնակցած, ինչպես նաև որակավորման քննությունը չհանձնած և հաջողի ծրագրով ուսուցում անցած հավակնորդների վերահանձնման որակավորման քննության կազմակերպման և անցկացման ժամանակացույցը՝ 1-ին հավելվածի համաձայն:**
- 2. Սահմանել որակավորման քննությունը վերահանձնելու դիմումի ձևը՝ 2-րդ հավելվածի համաձայն:**
- 3. Սույն որոշումը հրապարակել ՀՀ փաստաբանների պալատի կայքում:**

ՀՀ փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի նախագահ՝

Սիմոն Բաբայան

Որոշում N 01-Լ
13 հունվարի 2023թ.
ք. Երևան

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի որակավորման
հանձնաժողովի նախագահի
13.01.2023թ. N 1-Լ որոշման

Հանձնաժողովի նախագահ՝
Սիմոն Բաբայան

**2022Թ. ԱՇԽԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՐԳԵԼԻ ՊԱՏՃԱՌՈՎ
ՉՄԱՍՆԱԿՑԱԾ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ
ՉՀԱՆՁՆԱԾ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳՐՈՎ ՌԻՍՈՒՑՈՒՄ ԱՆՑԱԾ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ
ՎԵՐԱՀԱՆՁՆՄԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

1. 2022 թվականի աշնան որակավորման քննությանը հարգելի պատճառով չմասնակցած, ինչպես նաև որակավորման քննությունը չհանձնած և հատուկ ծրագրով ուսուցում անցած հավակնորդների համար որակավորման քննություն վերահանձնելու **դիմումների ընդունման ժամկետն է՝ 16.01.2023 թվականից մինչև 23.01.2023 թվականը ներառյալ՝ աշխատանքային օրերին ժամը 10.00-ից մինչև ժամը 18.00-ն:**
2. Որակավորման քննություններն անցկացվելու են հետևյալ հասցեում՝ **ք.Երևան, Զաքյան 7-2:**
3. Սահմանված ժամկետում դիմում ներկայացրած հավակնորդները որակավորման քննության
 - 1) առաջին փուլին մասնակցելու համար պետք է նախապես գրանցվեն քննության օրը՝ ժամը **09³⁰-ից** մինչև **09⁴⁵**՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ,
 - 2) երկրորդ փուլին մասնակցելու համար պետք է գրանցվեն որակավորման հանձնաժողովի կողմից նշված ժամին՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:
4. Որակավորման քննության առաջին փուլն անցկացվելու է **25.01.2023թ-ին ժամը 10.00-ին:**
5. Որակավորման քննության երկրորդ փուլն անցկացվելու է **30.01.2023թ-ին: Հավակնորդներից յուրաքանչյուրին ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմը կծանուցի քննության ժամի մասին:**